

5 Եւ հաստատեցին՝ առաջնորդ ուխտիս վր Սվետիս եւ մի-  
6 աբանքս ամէն զյինանցն Գ կիւրակէն Գ պատարագ.  
7 ամէն:

Տարբերեցում.— 1. Զալ, Արիմ երկրորդ տողում ավելացրել են մոր Մարիամ անունը:  
2. 4-րդ տողում Մ (200) սպիտակ Զալ կարդացել է ճ սպիտակ:  
3. 5-րդ տողում վ(ար)դա(պեա) Ավետիս Զալ և Արիմ կարդացել են Կիրակոս:

133. Նույն նախագավթի հս պատին ներում ցածր, մասենադարանի  
մուսքի աջ կողմում

Հ ՁԽ Մ 1291

Հրատարակված է՝ Զալ 37—38, Արիմ 64, Վիմ 134

1 Կամաւն Այ ես՝ Սգիս Բէրդկէ-  
2 ցի միաբանեցա Ածածնիս եւ  
3 էտու զիմ զն՝վ՝ած այգին, որ ի  
4 Տուրքէն ի զնել ու այն չաք իմ հեր-  
5 էնի էգոյն, որ ի Լանջին: Հայր ՅՏէ-  
6 ս եւ միաբանք էտուն Գ պատարագ տ Յովս-  
7 էփա վկաի: Կատարիչք աւրհ-  
8 նին Այ: Ի թվ. ՁԽ:

Մանրություն.— 1. Առաջին տողում Սգիս Սարգիս-ի համառոտագրությունն է:  
2. Չորրորդ տողում Տուրքեն բացասական ձևը (ուղղականը՝ Տուրք) ոչ թե  
Թուրք բառից է, ինչպես ենթադրել են Զալ, Վիմ և այլն (Թուրքեն ի գնեալ),  
այլ հայերեն Տորք (Պարգև անունն է, հետևապես ոչ թե հասարակ բառ է, այլ  
անձնանուն:

3. Ու այն չաք իմ հերեմի էգոյն՝ որ ի Լանջին պետք է թարգմանել այսպես.  
«(Նվիրեցի)... եւ իմ հայրենի այգուց նույնքան (=այն չաք), որ գտնվում է  
Լանջում» պարզ է, որ այստեղ Լանջը ոչ թե հասարակ բառ է լեոնալանջ ցույց  
տվող, այլ դաշտամասի (հանդի) տեղանուն:

Տարբերեցում.— 1. 4-րդ տողում Տուրքեն ի գնել ու այն չաք իմ հերեմի էգոյն, որ  
ի Լանջին: Զալ կարդացել է՝ Թուրքեն գնեալ առան չաքիմ հերեմի այգին, որ ի  
Լանջինե, իսկ Արիմ՝ ի Թուրքեն գնեալ առայ, նշանք իմ հերեմի այգույն և  
այնուհետև Լանջին բառից հետո ավելացնում է բնագրում չեղած գեղի առաջին  
է բառերը, որ № 123 արձանագրությունից սխալմամբ տեղափոխել է այստեղ:

4. 6-րդ և 7-րդ տողերում Յովսեփա վկաի բառերը Զալ և Արիմ գրել են  
սրբոյն Կատարիների:

134. Նախորդի կողմին, խաչի զլխին

ԺԳ դար

Հրատարակվում է առաջին անգամ